№ 112 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 20 — 1900 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 20 № 112

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՈՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
ՏԷԼԷՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Սոֆիա Սուլխանովնա եւ Դաւիթ Գաւրիլովիչ Տէր-Ստեփանովներ յայտնում են ազգականներին եւ ծանօթներին, որ այս յունիսի 16-ին վախճանվեց առաջինի եղբայրը, իսկ երկրորդի եղբօր որդին, երդուեալ հաւատարմատար՝

**ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒԼԽԱՆԻՉ ՏԷՐ-ՍՏԵՓԱՆՈՎ**

Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ այսօր, երեքշաբթի, յունիսի 20-ին, իր բնակարանից, որ գտնվում է Պասկէվիչի փողոցի վրա, № 14 (նախկին Ստարօ-Ինստիտուտսկայա) դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին, իսկ այնտեղից դէպի Խոջիվանքի գերեզմանատունը։ 2—2

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ապարդիւն փորձեր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գուտենբերգի յօբելեանը Պետերբուրգում. Նամակ Սիմֆերօպոլից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զինական գործերը. Նամակ Շվեյցարիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

## ԱՊԱՐԴԻՒՆ ՓՈՐՁԵՐ

—

Ոչ ոք համակրութեամբ չողջունեց այն նորմուծութիւնը, որ հոգեւոր իշխանութիւնը ծրագրել է թեմական դպրոցների հոգաբարձական մարմնի կազմութեան համար։ Ինչպէս յայտնի է, ծրագրված է, որ ութ հոգաբարձուներից վեցը լինեն աշխարհական անձինք եւ երկուսը քահանաներ, մինչդեռ մինչեւ այժմ քահանաները մասնակցութիւն չունէին այդ գործում։ Բնականաբար հարց է ծագում հասարակութեան համար թէ՝ ինչ նոր բան պէտք ման դպրոցին քահանաները, ինչ պակաս պէտք է նրանք լրացնեն, ինչ բարեփոխութիւններ կարելի է սպասել նրանց մասնակցութիւնից հոգաբարձական գործերի մէջ, ո՞րքան պէտք է նրանք աւելացնեն հոգաբարձութեան նշանակութիւնը եւ բարձրացնեն նրա հեղինակութիւնը։

Այդ հարցերի պատասխանը բացասական է։ Մենք յայտնեցինք մեր կարծիքը այդ նորմուծութեան առիթով եւ ցանկանալով խօսել նրա դրական կողմերի մասին, ասացինք, որ նա մի ապարդիւն փոփոխութիւն է, որից ոչ մի օգուտ չէ կարելի սպասել։ Իսկ ինչ վերաբերում է հեղինակութեան հարցին, վաղուց է, որ մեր քահանաները կորցրել են վստահութիւն ժողովրդի մէջ։ Դեռ մի յիսուն վաթսուն տարի սրանից առաջ, երբ աշխարհականները շատ անկիրթ էին եւ հրապարակի վրա չէին դրված այն բազմատեսակ խնդիրները, որոնք այժմ առաջ են եկել մեր կեանքի մէջ, քահանաները, իբրեւ աւելի գրագէտներ, կարող էին որ և է հեղինակաւոր դեր կատարել։ Բայց կեանքը առաջ գնաց, նոր խնդիրներ երեւացին, աշխարհականները կրթութիւն ձեռք բերին և ուրիշ աւելի բաղադրեալ յարաբերութիւնների մէջ մնան ուրիշների հետ, մինչդեռ քահանաների մեծագոյն մասը մնալով նոյն վիճակի մէջ՝ կորցրեց իր վստահութիւնը և հեղինակութիւնը։ Հասկանալի է, որ ոչ ոք չէ էլ կարող սպասել, որ մի հիմնարկութիւն կարող կը լինի աւելի հեղինակաւոր դառնալ քահանաների մասնակցութիւնից։ Մեր կեանքի վերջին տասնեակ տարիներում շատ քիչ քահանաներ հանդէս եկան իբրեւ աչքի ընկնող հասարակական կամ գրական ոյժեր և անձնուէր գործողներ։

Ուրեմն ինչն է ստիպում դիմել այդ դասակարգին ներկայումս։ Միթէ մենք եկանք այն եզրակացութեան, որ մեր նոր և ընդարձակվող պահանջներին պէտք է քահանաները օգնութեան գան, որ նրանց բացակայութիւնն է խոչընդոտ մեր կրթութեան գործի առաջադիմութեան։

Ի հարկէ ոչ։

Այստեղ կրկնվում է այն խարխափումները փորձը, որ ցոյց է տալիս մեր հոգեւորականութիւնը մի քանի ժամանակից ի վեր, ցանկանալով ամեն դէպքում իշխանութեան թելերը բռնելու իր ձեռքում։ Մի ժամանակ ինքն աշխարհական դասն էր առաջ քաշում քահանաներին և նրանց էր դիմում զանազան խնդիրներ քննելու ժամանակ, որովհետեւ ինքը համեմատաբար աւելի քիչ պատրաստութիւն ունէր, իսկ այժմ հոգեւորականութիւնը կամենում է ոյժով իր ձեռքի մէջ պահել հեղինակութիւն։

Մենք հասկանալի կը համարէինք այդ նորմուծութիւնը, եթէ նա խմբագրված լինէր այսպէս, թէ հոգաբարձական մարմին կազմելու համար ընտրված եկեղեցական պատգամաւորները կարող են թեկնածուներ ընտրել և քահանաներից։ Այն ժամանակ պատգամաւորների ժողովը, եթէ կարեւոր կը դատէր, եթէ նկատի կունենար աչքի ընկնող ոյժեր քահանայական դասակարգի մէջ, կանգ կառնէր և նրանց վրա։ Դա կը լինէր մի կամաւոր գործ և լոգիկական գործողութեան մի արդիւնք։

Եթէ կամենում էք, որ քահանաները աղդեցիկ դեր կատարեն հասարակական կեանքում, պատրաստեցէք նրանց աւելի լաւ կերպով, զինեցէք նրանց հիմնաւոր կրթութեամբ, այն ժամանակ նրանք, բնականաբար, կը սկսեն կարեւոր ոյժ ճանաչվել. իսկ մինչեւ այդ՝ բոլոր արհեստական փորձերը կը մնան փորձեր, որոնք եթէ վնասակար չեն լինի, յամենայն դէպս կը լինեն ապարդիւն։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԳՈՒՏԵՆԲԵՐԳԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Մարդկութիւնը իր ամենամեծ բարերարներից չատերի մասին ճիշդ տեղեկութիւններ չունի։ Ահա Գուտենբերգը, որի հնարած շարժական տառերը անհուն յեղափոխութիւն գցեցին ամբողջ աշխարհի մէջ։ Դրանից աւել ինչ մեծ բարեփոխութիւն։ Բայց Գուտենբերգի կեանքը մեծ մասամբ անյայտութեան մէջ է կորած։ Հաստատապէս յայտնի չէ նոյն իսկ, թէ ելք է նա ծնվել։ Մի ժամանակ ենթադրում էին թէ տպագրութեան հայրը ծնվել է 1396—1398 թուականներին, բայց յետոյ հետազօտութիւնների հիման վրա ծննդեան տարեթիւը ընդունվեց 1400 թուականը։ Այս տարի, ուրեմն, լրանում է այդ հանճարեղ մարդու ծննդեան հինգհարիւրամեակը։ Քաղաքակիրթ մարդկութիւնը չէր կարող անտարբեր մնալ այդ յօբելեանի ժամանակ, քանի որ նա այնքան շատ երախտապարտ է Գուտենբերգին։ Զանազան առիթներով շատ անգամ է տօնվել տպագրութեան հնարողի յիշատակը եւ Գերմանիայում շատ տեղեր դրվել են Գուտենբերգի արձանները։ Բայց եւ այդպէս, ծննդեան հինգհարիւրամեակն էլ տօնվեց մեծ հանդէսներով։

Պետերբուրգում, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, հանդիսաւոր տօն կատարվեց Սօլեանոյ Գօրօդոկ չինութեան մէջ։ Ներկայ էր ահագին բազմութիւն, որ հաղիւ էր տեղաւորվում այդ ահագին տան դահլիճում։ Կանաչներով զարդարված արձանը, որ ներկայացնում է Գուտենբերգին՝ յենված տպագրական մամուլի վրա, դրված էր ամբիոնի վրա։ Շատ ճառախօսութիւններ եղան. մէկը խօսեց այն նշանակութեան մասին, որ ունի Գուտենբերգի գիւտը կուլտուրական առաջադիմութեան գործում, միւսը կենսագրական տեղեկութիւններ հաղորդեց անմահացած Գուտենբերգի մասին։ Պատգամաւորութիւններ էին ուղարկել դիտութիւնների, գեղարուեստների ակադեմիաները, ռուսաց գրականական ընկերութիւնը, ռուս գրագէտներին օգնելու ընկերութիւնը, տեխնիքական ընկերութիւնը, զանազան տպարաններ, հրատարակչական ֆիրմաներ եւ այլն։ Պատգամաւորներից մի քանիսը փայլուն ճառերի մէջ ցոյց տուին թէ ինչ է Գուտենբերգի գիւտը մարդկութեան համար։ Այնուհետեւ կարդացվեցան բազմաթիւ հեռագիրներ, որոնք ստացվել էին թէ արտասահմանից եւ թէ Ռուսաստանի զանազան կողմերից։

Կարճ ընդմիջումից յետոյ սկսվեց հանդէսի գրական—երաժշտական մասը։ Եղան խմբական երգեր, կարդացվեցին զանազան բանաստեղծութիւններ։ Այնուհետեւ հանդէսին մասնակցողներին ճաշ տրվեց։

—

Այս առիթով չէ կարելի չը նկատել, որ մեր Կովկասը, որքան գիտենք, բոլորովին անտարբեր մնաց եւ ոչ մի նշանով ցոյց չը տուեց, թէ ինքն էլ հասկանում է Գուտենբերգի երախտիքը եւ գիտէ պատուել նրա գիւտը, թէեւ տպագրութիւնը մեզանում էլ մեծ գործ է կատարել եւ կը կատարէ այսուհետեւ։ Աւելորդ կը լինէր այս անտարբերութեան պատճառը որոնել. դա մեր յետամնացութիւնն է։ Ի յիշատակ Գուտենբերգի ծննդեան հինգհարիւրամեակի, «Մշակը» եկող շաբաթից կը սկսէ տպագրել մի շարք յօդուածներ, որոնք համառօտ կերպով կը ներկայացնեն հայերէն տպագրութեան պատմութիւնը եւ այն դերը, որ կատարել է տպարանական մամուլը մեր ազգի մտաւոր առաջադիմութեան եւ վերածնութեան ասպարէզում։

## ՆԱՄԱԿ ՍԻՄՖԷՐՕՊՕԼԻՑ

—

Յունիսի 8-ին

Սիմֆէրօպոլի հայ համայնքի խօսակցութեան նիւթը «ս. Նունէի» պատկերն է։ Սիմֆէրօպոլի հայ տուղերից մէկը, ոմն պ. Թօփալեան, որն իր հանդուցեալ կնոջ յիշատակին տեղիս հիւանդանոցում իր հաշւին մի մահճակալ է դրել չքաւոր հայ եւ օտարազգի հիւանդների համար, նուիրել է եւ վերոյիշեալ պատկերը հայոց եկեղեցուն իբրեւ ս. Նունէ կոյսի պատկեր, որն այժմ գտնվում է տեղիս հայոց գերեզմանատան աղօթատանը։

Ինչպէս լսեցինք արժանահաւատ տեղերից, սկզբում տեղիս քահանաները հակառակ են եղել այդ իւղանկար պատկերի եկեղեցի ներմուծելուն, բայց յետոյ չնորհիւ ինչ-ինչ հանգամանքների, որ միայն իրանց է յայտնի, կօնսիստորիայից էլ հրաման ստանալով օծում են պատկերը եւ անուանում «ս. Նունէ կոյսի» պատկեր։

Այժմ երբ ամեն ինչ վերջացած է եւ պատկերը օծված, մի խուլ շշուկ է ընկել տեղիս հայերի մէջ եւ պարզվել, որ իրանց սուրբի տեղ ընդունածը Թօփալեանի հանդուցեալ կնոջ պատկերն է...

Ղրիմցիները շատ բարեսիրտ եւ եօլա տանող մարդիկ են, միշտ «կարծեմ»-ով են խօսում, մի դրական կարծիք չեն յայտնում որ եւ է հարցի մասին, բայց մեզ մօտ փոքր ինչ համարձակ գտնվեցան եւ ուղղակի ասացին, որ այն պատկերը վերոյիշեալ պարոնի կնոջ պատկերն է։ Մենք էլ մեր կողմից հարցրինք յայտնի մի նկարչի, որը եւ հաստատեց ժողովրդի կարծիքի ճշմարտութիւնը, ասելով որ ճիշդ Թօխալեանի կնոջ պատկերն է...

Երբ մի քանի անհատ միայն պնդել են, որ պատկերը մերժվի, նրանք, որոնցից կախված է ներմուծելու եւ օծելու իրաւունքը, պատասխանել են միաձայնաբար. «ինչու չընդունենք, ո՞վ կարող է մեզանից հաստատել, ս. Նունէի ինչ տեսակ դէմքի գծագրութիւն ունենալը, գուցէ եւ հէնց այս դէմքը նման է նահատակ կոյսի դէմքին...»

Զարմանալի է, որ ժամաչափիկների ծալքերի սխալ դասաւորութեան մէջ եկեղեցական կանոնների, ծէսերի ու սովորութիւնների խախտումն նկատող արժանապատիւ հայրերը այնքան թոյլ եւ անուշադիր են գտնվել այն դէպքում եւ տեղի տուել ժողովրդի դժգոհութեան։ Ցանկալի կը լինէր, որ թիւրիմացութիւնները պարզելու համար, կօնսիստորիան քննիչ նշանակէր եւ վերջ տար այս մի կողմից ցաւալի, միւս կողմից ծիծաղելի դէպքին. կօնսիստորիան մեղաւոր չէ, որ օծվել է այս պատկերը, մեղաւորները առաջարկողներն են, ի հարկէ, որոնք եւ արժանի են յանդիմանութեան, եթէ քննութիւնը ցոյց տայ, որ իսկապէս սուրբի անուան տակ ծածկված է մի ոչ «սուրբ» անձնաւորութիւն։ Սիմֆէրօպոլցիք սպասում են գործի քննութեան, թող չտապէ կօնսիստորիան։

Ս. Խանոյեան

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Շուշի, յունիսի 13-ին

«Մշակի» անցեալ համարներից մէկի մէջ կարդացինք, որ Շուշու հոգեւոր դպրանոցի վեցերորդ դասարանի աշակերտներին արձակել են, բայց այդ կարգադրութեան պատճառների մասին ոչինչ չէր ասված։ Կամենալով ցրվել այն լուրերը, որ դիտմամբ տարածում են դպրոցի մօա եղող մի քանի անձնաւորութիւններ, որովհետեւ տեսուչ դառնալու մեծ տենչն ունեն եւ այդ պատճառով փորում են իրար ոտի տակ, խնդրում եմ թոյլ տալ ինձ «Մշակի» միջոցով պարզել այդ դէպքը։

Ուսուցիչները յաճախ գանգատվում էին տեսչին այդ դասարանի աշակերտների ծուլութեան եւ անփոյթ վերաբերման մասին դէպի դասերը, մանաւանդ աստուածաբանական դասերը։ Այդ գանգատաւորներից մէկն էլ ես էի։ Բայց գործը քննելուց յետոյ ես դադարեցի աշակերտներին մեղադրելուց եւ խղճում էի միայն նրանց։ Պ. Տէր-Միքէլեան, վեցերորդ դասարանի դասատիրակը, որը եւ հինգ առարկաների դասատու է նոյն դասարանում, իր փողոցային հայհոյանքներով եւ միաւորներով աշակերտներին այն դրութեան էր հասցրել, որ սրանք կատարելապէս կորցրել էին պարապելու եռանդը, յաճախ իմ դասին աշակերտները գանգատվում էին գլխացաւի եւ թուլութեան վրա. եւ դասատիրակի ջանքերի հետեւանքը այն եղաւ, որ մի փառաւոր օր այդ պարոնի դասին աշակերտները չը կամեցան տալ նրան թանաքաման եւ գրչակոթ, պատճառաբանելով, թէ չունեն։ Այս դէպքը զայրացրեց տեսչին եւ սա, օգտվելով իր լիազօրութիւնից, արձակեց աշակերտներին, հաղորդելով վերջիններիս, որ նորից կընդունվեն, եթէ բերեն իրանց խնամատարներին կամ ծնողներին։ Այդ պահանջը պիտի կատարէին վեցերորդ դասարանի գիւղացի աշակերտները, որոնց ծնողները ապրում են հեռաւոր տեղերում։ Երեք օրից յետոյ, ինչ ասել կուզի, աշակերտներին առանց այլեւայլութեան ընդունեցին։ Աշակերտների վերաբերմունքը դէպի առարկան բնականաբար նոյնը մնաց։

Ահա մի պատկեր թեմական դպրոցի վարչական կարգերից։

Տեսչացու ուսուցիչներից մէկը, կամենալով երեւի կրճատել իր մրցակիցների թիւը, փափաքում է անցեալ տարի նշանակված երեք հոգաբարձուներից մէկի ականջին, թէ իբր ես բարձրագոյն ուսման վկայական չունեմ, բայց հաժաբարակաի ռոճիկ եմ ստանում։ Այդ հոգաբարձուն իսկոյն եւ եթ մի զեկուցում է ուղարկում Կաթողիկոսին իր եւ միւս երկու նշանակովի հոգաբարձուների ստորագրութեամբ։ Այս զեկուցման պատասխանը լինում է յունվարին Կաթողիկոսի գրած կօնդակը, որով Վեհափառը հրամայում է տալ ինձ այն ռոճիկը, որը ստանում էի անցեալ տարի։ Հարկաւոր է նկատել, որ անցեալ տարի ես ընդունել եմ պաշտօնս 1040 ռուբլի ռոճիկով, առանց իմանալու, որ պէտք է սակարկել։ 98/99 ուսումնական տարին վերջանալուն պէս, ես յայտնեցի տեսչին, որ կը մնամ պաշտօնիս մէջ, եթէ ինձ հրաւիրեն հաժալաբարակաի ռոճիկով։ Ստանալով համաձայնութիւն, եկայ նորից Շուշի եւ մինչեւ յունվար ամիսը վարձատրվում էի տեսչի խոստման համաձայն։ Կօնս-

դակը ստանալուց յետոյ, հոգաբարձուներից երկուսը զգացին իրանց սխալը եւ առաջարկեցին ինձ մնալ նոր պայմաններով, խոստանալով տարվայ վերջին լրացնել ռոճիկս դրամական նուէրով։ Ես, ի հարկէ, հրաժարվեցի նոր պայմանից էլ, նուէրից էլ եւ երեք օր ստիպված էի—թէեւ այդ ինձ մեծ ցաւ էր պատճառում—ընդհատել դասաւորութիւնը. իսկ չորրորդ օրը վրա հասաւ մի նոր կօնդակ, նոր հրամանով՝ որ չարունակեն ինձ համալսարանական ռոճիկ տալ։

Հոգաբարձուները, կամենալով երեւի արդարացնել իրանց, յայտնել էին, որ իրանք բոլորովին մեղաւոր չեն, այլ մեղաւոր է դպրոցի ուսուցիչներից մէկը, որը գնացել, հաղորդել է պ. Թիւնիբէկեանին (նշանակված հոգաբարձուներից մէկը) վերեւում յիշատակված սուտը։ Թէ ով է այդ ուսուցիչը, հոգաբարձուները չեն յայտնում։ Եւ իմ ընկերակից ուսուցիչները ամենայն պաղարիւնութեամբ վերաբերվեցին դէպի իրանց պաշտօնակցի այդ վարմունքը։ Այս դէպքը բաւական բնորոշ է թէ նշանակոյի հոգաբարձուների եւ թէ մեր ուսուցչական խմբի մեծամասնութեան համար։

Այս սեմինարական տպաւորութիւնները լրացնելու համար մի քանի գծեր եւս։

Որոշ ուսուցիչների թոյլ աշակերտները կարողանում են ամենակարճ ժամանակամիջոցում աջողակ աշակերտներ դառնալ, բաւական է միայն, որ իրանց վարժապետի մօտ դասեր վերցնեն. այս վերջինս, առանց յայտնելու տեսչին կամ դաստիարակին, փոխում է այդ թոյլ աշակերտների անցեալ երկամսեակի թուանշանները։ Կամ թէ, օրինակ, աշակերտը սեպտեմբերին քննութիւն ունի տալու եւ նշանակված օրը առանց որ եւ է պատրաստութեան գալիս է քննութեան. եթէ չէ աջողվում մի կերպ դուրս պրծնել, բաւական է, որ մի շաբաթ պարապի իր ուսուցչի մօտ (ի հարկէ պատշաճաւոր վարձատրութեամբ) եւ մի շաբաթից յետոյ քննութիւնը կանցնի բաւարար կերպով։

Այս ուսումնական տարվայ երկրորդ կիսամեակին բացվեց դպրոցում «սերտարան», որի նպատակն է միջոց տալ չքաւոր եւ տնային յարմարութիւններից զուրկ սաներին ճաշից յետոյ դպրոցի լուսաւոր եւ տաք դահլիճում պատրաստելու դասերը։ Ուսուցիչները պիտի հերթով հսկեն սերտարանում եւ իրանց բացատրութիւններով դիւրացնեն աշակերտների պարապմունքները. աշակերտների տրամադրութեան տակ պիտի դնէին քարտէզներ, բառարաններ եւ այլ ուսումնական պիտոյքներ։ Պէտք էր սպասել, որ այն ուսուցիչները, որոնք յօգուտ եկեղեցու եւ հայրենեաց ճառեր արտասանելու սովորութիւն ունեն, իրանց բոլոր ոյժերը կը նուիրէին այդ հիմնարկութեան աջողութեան։ Բայց աւադ. ուսուցչական խմբի փոքր մասը միայն համաձայնվեց սերտարանի մէջ մասնակցելու։

Վերջացնելով գրութիւնս, թոյլ եմ տալիս ինձ հրաւիրել ընտրվելիք հոգաբարձուների ուշադրութիւնը մեր ուսուցչական ժողովի արձանագրութիւնների վրա։

Վերջին ուսուցչական ժողովներից մէկում, երբ դեռ չէր ստացվել Վեհափառի կօնդակը ուսուցիչների արձակման մասին, ես յայտնեցի դժգոհութիւնս ուսուցչական խմբից եւ հրաժարվեցայ առաջիկայ տարվանից այդ խմբի հետ ուսուցչութիւն անելու պատուից։

Կ. Ատամանեանց

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Լրագիրները հաղորդում են, որ կովկասեան կառավարչապետ իշխան Գ. Գոլիցին շուտով պէտք է վերադառնայ Կովկաս։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օգնական Զվերեվ, այցելելով Թիֆլիսի արհեստաւորաց դպրոցը, զոհ մնաց նրա արդիւնքներից։ Այցելելով գիմնազիաները՝ նա ծանօթացաւ աշակերտների առաջադիմութեան հետ։ Այցելութիւններից ազատ ժամերին նա ուսումնասիրում էր երկրի կրթութեան վերաբերեալ զանազան խնդիրներ։ Ամսի 15-ին Զվերեվ ճանապարհ ընկաւ ուսումնական շրջանի հոգաբարձու Եանօվսկու հետ դէպի Բաթում, ուր մնաց մի օր եւ ծանօթացաւ տեղական դպրոցների եւ դպրոցական նոր կառուցվող շինութիւնների հետ։ Ամսի 16-ին նա չոգենաւով ճանապարհվեց Սօչի։

—

Վրաց ազնուականների կալուածքների հրակող մասնաժողովը յատկացրել է 10 հազար բուբլի՝ թատրոնը վերանորոգելու համար, որտեղ ներկայացումներ արգելված էին։ Այդպիսով վրաց ներկայացումները սեպտեմբերից կը շարունակվեն իրանց սեփական թատրոնում։

—

Այս օրերս դէպի Մեշեդ ճանապարհ ընկան Կովկասից երկու ինժեներներ՝ Սարուվէ եւ Ժեգժդրօ։ Նրանք պէտք է հետազօտեն Մեշեդի շրջակայքում գտնվող երկաթէ եւ պղնձէ հանքերը։ Մեշեդում մի քանի շաբաթ մասնագիտական խուզարկութիւններ անելուց յետոյ նրանք կը վերադառնան Կովկաս եւ այնուհետեւ Սարուվէ կուղեւորվի Պետերբուրգ, իսկ Ժեգժդրօ դէպի Արդուբիլի կողմերը, որտեղ այդ ինժեներները արդէն գտել են պղնձի հանքեր։ Նրանք գործում են ռուսաց հանքագործական ընկերութեան կողմից։

—

Այս տարի արտասահման եւ մանաւանդ Պարիզի ցուցահանդէսը գնացողների թիւը Կովկասից անագին է։ Մինչեւ յունիսի 17-ը նահանգապետի դիւանատնից անցագիրներ են վերցրել 582 հոգի։

—

Թիֆլիսի Ի-ին իգական գիմնազիայում աւարտող աշակերտուհիներից մինչեւ այժմ իսնդիրքներ են տուել վերոյիշեալ գիմնազիայի 8-դ լրացուցիչ մանկավարժական դասարանը մտնելու 84 աշակերտուհիներ։ Խնդիրքներ դեռ չարունակում են տալ։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Սինոդը, փոխելով Աչոտ վարդապետի կարգադրութիւնը Ղարաբաղի կօնսիստորիայի ատենադպրի եւ էկզէկուտորի արձակման մասին, ճանաչեց նրանց պաշտօնեայ, միայն ժամանակաւորապէս հեռացրված պաշտօնից՝ մինչեւ քննութեան վերջը, եւ նշանակեց քննութիւն։ Քննիչ նշանակված է Մխիթար վարդապետ Տէր-Մկրտչեան»։

—

ԶԱՔԱԹԱԼԻՑ մեզ գրում են յունիսի 13-ից հետեւեալը. «Կատարեալ սով է. ահա մէկ շաբաթ է, որ հաց չէ ճարվում. մարդիկ փողը ձեռքին այս հացթուխի մօտից միւսի մօտ են վազում եւ հաց չեն գտնում եւ այս դէպքը այն աստիճանին հասաւ, որ մարդիկ գնում են հացթուխի մօտ հաց են պահանջում, իսկ նա փոխանակ հաց տալու եւ կարգին պատասխանելու, հաց դուրս տալու երկաթով խփում է մէկի գլուխը ճղում, որը այս բօզէիս էլ գլխի ստացած սաստիկ վէրքի պատճառով հիւանդանոցում պառկած է։ Մեզանում եղանակները կատարեալ գարնանային են»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Դերասանական խումբը, նախկին տարիների պէս, եկաւ մեր քաղաքը։ Խումբը կառավարում է պ. Արաքսեան. մասնակցում են Արէլեան, տ. Մայուրեան, Փառանձեմ, օր. Ադամեան, պ. Ալիխանեան, Ստեփանեան, Մէլիք-Յովսէփեան, Զաուիսեան։ Առաջին անգամ պիտի խաղան Ժան-Բօդրի» նոր պիեսան»։

—

ՎԵՐԻՆ-ԱՂԴԱՆԻՑ մեզ գրում են. «Ամարանոց-սարերում սկսվել են գողութիւններ. քշում, տանում են մէկի կովը, երկրորդի եզը, երրորդի ձին եւ չը պատահեց, որ գոնէ մի անգամ գողացվածը յետ ստացվէր»։

—

ՍԱԼԵԱՆԻՑ մեզ գրում են. «Կարա-Նուրի կոչված ղշլաղում, գաղթական ոուսների հիմնած Նօվօ-Նիկոլաեվսկի գիւղը Նոր-Արազից ջրանցքով ջուր բերելու համար մինիստրութիւնը բաւական խոշոր գումար էր յատկացրել։ Ջրանցքը փորեցին մեր ինժէներները։ Բայց յորդացած գետի առաջին ճնշումը ջրանցքի բոլոր սահանքանդն ու թումբերը հիմնայատակ արեց եւ հեղեղեց գաղթականների սքանչելի արտերը։ Ինքն ինժէները արհամարհանքով էր վերաբերվում տեղացի գիւղացիների բարեկամական ցուցմունքներին, որոնք դարերի ընթացքում գաշտերի ոռոգման հետ գործ ունենալով, մեծ փորձնական հմտութիւն ունեն։ Այժմ այդ գաղթականների ամբողջ յոյսը դարձեալ մնացել է գանձարանի վրա եւ հաւանական է, որ չուշանայ օգնութիւնը, ինչպէս անցեալ տարի, եւ կը լինի աւելի քան առատ։ Պետրոպավլովսկոէ եւ Նօվօ-Ալէքսանդրովսկոէ գիւղերի ցանքսերն խսպառ այրված են»։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԶԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

—

«Figaro» լրագրում տպվեց Լօնդօնի յատուկ թղթակցի հեռագիրը, որը հեղինակաւոր է համարվում արտաքին քաղաքականութեան հարցերում։

«Այստեղի շրջաններում շատ են խօսում այն հաղորդութեան մասին, որ արեց այստեղի չինական դեսպանը արտաքին գործերի մինիստրութեան մէջ եւ որը, ինչպէս ասում են, միաժամանակ արել են չինական դեսպանները Պարիզում եւ ուրիշ մայրաքաղաքներում։ Կարծում են, որ այդ յայտարարութիւնները բարեյաջող հետեւանքին կը հասցնեն։ Չինական դեսպանը յունիսի 8-ին եկաւ արտաքին գործերի մինիստրութիւնը եւ յայտնեց, թէ Լի-Խուն-Զանգը հաղորդեց իրան, որ չինական զօրքերը Տակուում ոմբակոծում էին եւրոպական զօրաբաժինները առանց չինական կառավարութեան թոյլտուութեան եւ որ եթէ եւրոպական պետութիւնները կը հաճաձայնվեն չը համարել այդ անցքը որպէս casus belli, այն ժամանակ Լի-Խուն-Զանգ անյապաղ կերթայ Պէկին եւ կը հաղորդի այդ բանի մասին կայսրուհուն, համոզված լինելով, որ այդ յայտարարութիւնը ամենամեծ տպաւորութիւնը կը գործի։ Անգլիական արտաքին գործերի մինիստրութիւնը պատասխանեց դրան, որ եթէ կապացուցվի, որ չինական զօրքերը յիրաւի յարձակողական դիրք բռնեցին առանց հրաման ուննալու Պէկինից, այն ժամանակ հաւանական է, որ եւրոպական կառավարութիւնները այդ փաստը casus belli չեն համարի։ Այստեղ խօսում են, որ ֆրանսիական արտաքին գործերի մինիստրը նոյնպիսի պատասխան տուեց չինական դեսպանին Պարիզում։ Մի եւ նոյն ժամանակ Պարիզի եւ Լօնդօնի կաբինէտները, ի հարկէ, իրաւունք վերապահեցին վարձատրութիւն պահանջել չինական կառավարութիւնից եւրոպական զօրաբաժինների վրա յարձակվելու համար։ Նոյնպիսի յայտարարութիւն արվեց եւ Բերլինում։ Այստեղի դիպլոմատիական աշխարհում եւ հասարակութեան մէջ այստեղից այն եզրակացութիւն են հանում, որ յոյս կայ համաձայնութեան գալ այդ հոդի վրա։ Յամենայն դէպս, Լի-Խուն-Զանգ գնաց Պէկին եւ, ըստ երեւոյթին, նա միջոցներ ունի արագ ազդելու կայսրուհու վրա»։

«Neuer Wiener Journal»-ի աշխատակիցը տեսնվեց Ֆրանսիայի, Անգլիայի եւ Եապօնիայի դիպլոմատիական ներկայացուցիչների հետ, որոնք ապրում են աւստրիական մայրաքաղաքում, եւ նրանք հաւատացրին նրան, որ պետութիւնների համերաշխութիւնը չինական հարցում անյողդողդ է։ Պետութիւնների մէջ, ըստ երեւոյթին, բացառութիւն է կազմում Միացեալ-Նահանգների կառավարութիւնը, որը տատանվում է եւ չը գիտէ ինչ դիրք բռնել։ Ամէրիկեան մամուլը կերակրում է իր ընթերցողներին յուզիչ լուրերով։ Օրինակ, ամէրիկական մի քանի լրագիրներում պատմվում է, որ իբր թէ Ռուսաստանը գաղտնի հովանաւորում էր «Մեծ բռունցքի» շարժման, կամենալով տիրել Պէկինը «Մեծ բռունցքի» ապստամբութիւնը ճնշելու պատրուակով եւ իր հովանաւորութիւնը հաստատել Չինաստանի վրա, բայց պետութիւնները արգելեցին նրա այդ քայլը։ Նիւ-Եօրկի լրագիրներից մէկի մէջ տպվեց Շանղհայի թղթակցի հեռագիրը, թէ Միացեալ-Նահանգները եւ Անգլիան դաշնակցութիւն են կապել եւ սպառում են մի քանի գնդերի գալուն Ֆիլիպեան կղզիներից։ Սակայն Վաշինգտօնի լրագիրները յայտնում են, որ անգլօ-ամէրիկական դաշնակցութեան լուրը հերքվում է կառավարչական շրջաններում։

«Matin» լրագրում տպվեց մի քաղուածք այն գաղտնի զեկուցումից, որ կազմել է չինական բարենորոգումների կուսակցութեան պարագլուխը։ Զեկուցումը վերաբերում է հոկտեմբեր ամսին եւ չինական կուսակցութիւնների գեղեցիկ պատկերն է տալիս։

«Չինական կուսակցութիւնները,—գրում էր Կանգ-Իւ-Վէյ,—կարելի է երեք կատեգորիայի բաժանել. այն է՝ այրի կայսրուհու կուսակցութիւնը, կամ յետադէմ կուսակցութիւն, կայսրի կուսակցութիւնը կամ ըէֆօրմների կուսակցութիւնը, եւ «միջին» կուսակցութիւնը։ Այրի կայսրուհին, չը նայելով, որ նա ներկայումս Չինաստանի կատարեալ ինքնիշխան միապետուհին է, համարեա կուսակիցներ չունի պաշտօնական շրջաններից եւ յունդ-լի-եամենից դուրս։ Նրա ամենամերձաւոր խորհրդականները բոլորը մանջուրներ են, այն է՝ Իւնդ-Լու, որին նա զօրքի գլխաւոր հրամանատար կարգեց, Կանգ-Վէյ, որին նա յատկապէս յանձնարարեց ապակենտրոնացնել նահանգներից առնվող հարկերը, պրինց Տուան եւ ուրիշներ։ Բացի Իւնդ-Լուից, բոլոր մնացածները հնչին մարդիկ են, վերին աստիճանի տգէտ եւ շահասէր։ Բարձրաստիճան պաշտօնեաների մէջ հայեացքների միաբանութիւն չը կայ, Տսունգ-Ֆու-Սիանգը պատկանում է կայսրուհու կուսակցութեան, իսկ Իւանգ-Շի-Կագի—կայսրի կուսակցութեան։ Մնացած բոլոր պաշտօնեաները եւ նրանց հետ չինացիների ինն տասերորդ մասը պատկանում են միջին կուսակցութեան։ Այդ միջին կուսակցութիւնը դաւանում է քաղաքական մի շատ գործնական եւ պարզ ֆօրմուլա—իւրաքանչիւր մարդ պարտաւոր է իր գործով զբաղվել եւ աշխատել որքան կարելի է երջանիկ կեանք ունենալ։ Սակայն սրա խորքում միջին կուսակցութիւնը աւելի կայսրի կողմն է, քան կայսրուհու։ Նա գիտէ, թէ կայսրուհին որքան տգէտ է եւ ինչպիսի անկարգ կեանք էր վարում վերջին երեսուն տարիների ընթացքում»։

## ՆԱՄԱԿ ՇՎԷՑՑԱՐԻԱՑԻՑ

—

Ժընէվ։ յունիսի 15-ին

Շատ ժամանակ չէ անցել, որ Ժընէվ այցելեցին մի քանի քիւրդ-գործիչներ, եւ եթէ չեմ սխալվում, այստեղից պիտի վերադառնային Եգիպտոս։ Քիւրդ եւ գործիչ,—երեւի կը բացականչի ամեն մի հայ, որ դասերից ի վեր սովոր է քիւրդ անուան հետ կապել թալան, սպանութիւն, առեւանգումն, գազանութիւն, բայց երբէք մի այնպիսի քաղաքակրթական բան, ինչպիսին է գործիչ...

Բարեբաղդաբար, իրականութեան մէջ այդ երկու բառերն արդէն կապված են, եւ մեզանից իւրաքանչիւրը՝ որ առօրեայ օպտիմիզմից դուրս՝ ընդունակ է հաւատալ գաղափարների վերջնական յաղթանակին, անկեղծ սիրով պէտք է ողջունի այն լուսաւոր շարժումը, որ սկսված է առ այժմ թէեւ փոքր, աննշան, բայց դէպի ապագան հաւատ ունեցող քիւրդ հայրենասէրների մի խմբի մէջ։ Այդ խմբի ներկայացուցիչները հաստատված են Եգիպտոսում, եւ հիմնել են այնտեղ «Քիւրդիստան» անունով մի լրագիր, որի մի քանի համարները առիթ ունեցայ տեսնել Ժընէվ։

Արդէն այն փաստը, որ երէկվայ արիւնարբու քիւրդերի այժմեան զաւակները ընդունակ են հիմնել մի լրագիր, եւ այդ լրագրի էջերում քաղաքակրթական պրոպագանդ անել—ցոյց է տալիս, որ գաղափարի ծիլը լաւ հողի մէջ է արմատ գցել։ «Քիւրդիստանի» էջերում գրող քիւրդ—գործիչները հրաւիրում են իրանց հայրենակիցներին՝ երես դարձնել թափառական, ուրիշի հաշուով ապրելու կեանքից, կանչում են նրանց դէպի խաղաղ եւ աշխատաւոր մի կեանք, քարոզում են հաշտարար լինել իրանց դրացի ազգերի՝ հայերի եւ եզիդիների հետ, եւ վերջապէս յորդորում են չը գրաւվել այն նենգ քաղաքականութիւնից, որի նպատակն է կռուեցնել քիւրդերին ուրիշների հետ եւ միշտ արիւնոտ ձեռնարկների հեղինակ դարձնել նրանց...

Անպայման ուրախալի է եւ այն, որ նոյն իսկ երկրի մէջ, Փոքր-Ասիայի քիւրդական նահանգներում՝ պակաս չեն այնպիսի ցեղեր, որոնք ընդհանրապէս կողմնակից են իրանց դրացի ազգերի հետ խաղաղ ապրելու քաղաքականութեան, եւ այդ պատճառով սիրով են ընդունում այդ նոր պրոպագանդայի գաղափարները։ Անհերքելի է, որ քրդական անգրագէտ եւ կիսավայրենի մասսան դեռ երկար ժամանակ չի լսի այդ նոր քարոզները, դեռ շատ տարիներ չի հասկանայ նորածին գաղափարների իմաստը, եւ երեւի շատ դէպքերում նոյն իսկ թշնամական դիրք կը բռնի,—բայց այդ երեւոյթը, իբրեւ ընդհանուր երեւոյթ բոլոր կիսակիրթ ցեղերի կեանքի մէջ, չէ յուսահատեցնում քիւրդ-գործիչներին, որոնք եթէ առ այժմ մեծ ոյժ եւ ազդեցութիւն չունեն, բայց ունեն մեծ հաւատ, եւ մեծ վստահութիւն...

Այդ հաւատն է, որ նրանց դրդում է չը բաւականանալ այժմեան փորձերով, այլ ձգտել ձեռնարկել եւ նոր կազմակերպութիւնների։ Չը զարմանանք ուրեմն, եթէ մի օր կը լսէք, որ քրդերէն լեզուով նոր լրագիր են հիմնում, կամ գրքեր են տպագրում՝ քրդերի մէջ տարածելու համար։ Հաւատանք մենք էլ նրանց հետ՝ որ այժմեան կայծերը չեն մարի...

Խ. Մալումեան

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Berl. Tageblatt» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հեռագրում է. «Ռուսաց դեսպան Զինովիեվ, որը նոր վերադարձաւ արձակուրդից, բերեց իր հետ հրահանգներ, որոնք վկայում են, որ Ռուսաստանը դիտաւորութիւն ունի չատ եռանդուն կերպով վարվել իր եւ Թիւրքիայի մէջ եղած բոլոր բայ խնդիրների վերաբերմամբ։ Այդ խնդիրներն են՝ պատերազմական տուգանքի վճարումը եւ այն վիճելի հարցերը, որոնք վերաբերում են հայոց պատրիարքարանին եւ ուղղափառ հայերին»։

—Ինչպէս յայտնի է, Ռուսաստանի եւ Թիւրքիայի միջեւ համաձայնութիւն կայացաւ Փոքր-Ասիայի հիւսիսային մասում երկաթուղիական

գիծ անցկացնելու վերաբերմամբ։ Այդ գծի կառուցումը թիւրքաց կառավարութիւնը իրան է վերապահում, բայց եթէ հրաժարվի դրանից, նա պարտաւորվում է այդ երկաթուղու կառուցման բացառիկ կոնցէսիան տալ ռուսաց կառավարութեան այն պայմաններով, ինչ պայմաններով որ տուել է Գերմանիային անատոլիական երկաթուղու գծի կառուցումը։ Այս օրերս կայացած մինիստրական խորհրդի մէջ չէյխ-ուլ-իսլամը Դամասկոսից մինչեւ Մէկկա երկաթուղու կառուցման մասի դէմ էր, բայց նրա կարծիքը հաւակրութիւն չը գտաւ, եւ խորհուրդը վճռեց այդ երկաթուղին կառուցանելու համար բոլոր պաշտօնեաների եւ օֆիցէրների ռոճիկներից 10 տոկոս հանել մի տարվայ ընթացքում։ Այդ բարձումը, կառավարութեան կարծիքով, գանձարանին մօտ մէկ միլիոն լիրա օգուտ կը տայ։

—«Times» լրագրին հեռագրում են, որ արքունավաճառեան կառավարութիւնը ֆինանսական շատ ծանր դրութեան մէջ է գտնվում։ Կրիտէր աշխատում է մի ելք գտնել եւ դրա համար պետական թղթադրամներ հրատարակեց, բայց ազգաբնակութիւնը հրաժարվում է ընդունել նրան։ Մի շրջաբերական հրատարակվեց, որով հրաժարվում է ազգաբնակութեանը անպատճառ ընդունելուց, այդ թղթադրամները, իսկ բօէրներից նա, ով կը հրաժարվի այդ թղթադրամներն ընդունել, կը հաւարվի հայրենիքի թշնամի եւ նրա գոյքը յարքունիս կը գրաւվի։

—«Local Anzeiger» լրագիրը հաւատացնում է, որ պարսից Շահի երեսից թախիծը չէ անցնում, որ թողել նրա վրա Պարսկաստանում արած ճանապարհորդութիւնը։ Որքան նա աւելի մօտենում էր սահմանին, այնքան խաղաղութիւն եւ լռութիւն էր տիրում իր շուրջը. ոչ մի քարաւան չէր երեւում սովորական ճանապարհների վրա, բոլոր տները դատարկ էին, ուտելիքներ բերելու համար ուղարկված մարդիկ դատարկ ձեռքերով էին վերադառնում, իսկ հեռու երեւում էին փախչող ուղտեր, որոնց ուղտապանները չտալով քչում էին իրանց Շահին տեսնելու ժամանակ։ Շահը մտածութեան մէջ ընկաւ։ Նրան դեռ առաջ զարմացրեց այն հանդամանքը, որ նահանգապետներից իւրաքանչիւրը աշխատում էր համոզել Շահին չանցնել իր նահանգով։ «Տարօրինակ բան է, իբր թէ ասեց Շահը, դիմելով իրան ուղեկցող մինիստրին,—նրանք ախր պէտք է լսած լինէին, որ ես Ռուսաստանից շատ փող եմ ստացել։»—«Ոչ ոք դրան չէ հաւատում»,—իբր թէ պատասխանել է մինիստրը։

## „ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

16 յունիսի

ԵՕԿՕՀԱՄԱ։ Եապօնիայում ապրող չինացիները դիմեցին եապօնական կառավարութեան մի պետիցիայով, որի մէջ խնդրում են, որ կառավարութիւնը գործ դնէ իր ազդեցութիւնը եւ օգնէ օտար պետութիւններին՝ վերականգնելու չինական կայսրին իր գահի վրա եւ փոխադրելու մայրաքաղաքը դէպի հարաւ։ Դա է միակ միջոցը՝ կարգը վերականգնելու եւ ըէֆորմներ մտցնելու համար։

ՇԱՆԳՀԱՅ։ Հրատարակված է կայսերական հաղորդագրութիւն, որ ասում է, թէ ապատամբ զօրքերը յունիսի 3-ին յարձակում գործեցին կայսերական պալատի վրա Պէկինում եւ այրեցին։

ՊՐԵՏՕՐԻԱ։ Կիրակի գեներալ Ֆրէնչ ձախ թեւի վրա, գեներալ Համիլտոն աջի վրա եւ տասն եւ մէկերորդ դիվիզիան կենտրոնում աշխատում էին շրջապատել թշնամուն, որը գրաւել էր բլուրները Սիլվերտաունից արեւելեան ուղղութեամբ։ Կռիւը շարունակվեց երեք օր, բայց երեքշաբթի գիշեր թշնամին յետ քաշվեց արեւելեան ուղղութեամբ, դեպագոյեան ճանապարհի երկարութեամբ։ Ցոյս ունեն, որ Բուլլերին կաջողվի բօէրների յետ քաշվելու ճանապարհը կտրել։

ՇԱՆԳՀԱՅ։ Շանդունում, չնորհիւ նահանգապետի, չինացիները շատ բարեկամական յարաբերութիւն ունեն օտարահպատակների հետ։ Միսիոնէրներին օգնութիւն է տրվում։ Նահանգապետի Պէկին ուղարկած սուրհանդակներից ոչ մէկը չը վերադարձաւ։ Չինացիները խմբերով հեռանում են Շանդհայից։ Այնպէս է երեւում, որ մի քանիներն այստեղ փրկութիւն են որոնում, իսկ ուրիշները փախչում են այստեղից Կանտոն եւ Ներնգպօ։

ԼՕՆԴՕՆ։ Ուօլսէյ բանկէտում մի ճառ արտասանեց, որի մէջ ասեց. «Ներկայ վայրկեանը շատ հաճելի չէ ամբողջ աշխարհին։ Անգլիան դեռ եւս վերջ չը դրեց հարաւ-ափրիկական պատերազմին, թէպէտ եւ յոյս ունեմ, որ նա մօտ է իր վախճանին։ Չինաստանում ապասվում են լուրջ բարդութիւններ, բայց ես վստահութիւն ունեմ դէպի երկրի պատերազմական ոգին եւ յոյս ունեմ, որ ինչ դժուարութիւններ էլ պատահեն, մենք լաւ զինուորների պակասութիւն չենք ունենայ»։

ԵՕԿՕՀԱՄԱ։ Մինիստրների կայացած խորհրդի մէջ քննվում էր, թէ ինչ դիրք պէտք է բռնէ այժմ Եապօնիան։ Մինիստրների մի մասը, որոնց թւում եւ ծովային ու զինուորական մինիստրները, կարծում էին, որ Եապօնիան պէտք է իր վրա վերցնի Չինաստանի ապստամբութիւնը ճնշելու գործը. մնացած մինիստրները աւելի լաւ էին համարում բաւականանալ օտարահպատակներին պաշտպանելով Չինաստանում։

ՊԱՐԻԶ։ Դէլկասէ յայտնեց մինիստրների խորհրդում, թէ եւրոպացիները հեռացան Իւնանսէնից եւ գտնվում են Տանգխայում։ Փոխարքան հրաժայեց գլխատել այն անձանց, որոնք բռնութիւններ են գործ դրել եւրոպացիների վրա Իւնանսէնում։ Դէլկասէ հաստատեց, որ Պէկինի եւրոպական պետութիւնների ներկայացուցիչները 12 մղոն հեռու են գտնվում Տեանցզինից։

17 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ցունիսի 18-ին Պետերբուրգ կը գայ Խիվայի խանի ժառանգ Ասֆէնդիար-Զան-Տիւրեա իր սվիտայով։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Փոխ-Ծովապետ Ռէմի կը փոխարինէ Կէմպֆին եւ կուղարկի նրան Նագասակի կամ Զիֆու։ Այն հարցը՝ թէ ինչու Կէմպֆ չը մասնակցեց Տակուի վրա յարձակմանը, կը քննվի, եթէ գրութիւնը կը թոյլ տայ այդ։

ԲԵՐԼԻՆ։ Գերմանական կրէյսէրային նաւատորմի հրամանատարը հաղորդում է, որ Տեանցզինի համար ազատարար զօրաբաժինը յետ դարձաւ։ Զը նայելով արտակարգ ջանքերին, զօրքերը արշաւանքը շատ լաւ կատարեցին. սպանվեցին մէկ կապիտան եւ 10 զինուորներ. ափ իջած զօրքերի դրութիւնը բաւարար է։ Դեսպանների մասին ոչինչ տեղեկութիւններ չը կան։ Զօրաբաժինը վերադարձաւ Լանգֆանից եւ Պէկինում չը կար։

ԼՕՆԴՕՆ։ Արտաքին գործերի մինիստրութիւնը ստացաւ Տեանցզինի մաքսատան վարչութիւնից Պէկինից եկած տեղեկութիւնը, որ դեսպանները դեռ Պէկինումն են։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Ծովապետ Կէմպֆ հաղորդում է Զիֆուից, յունիսի 16-ից, որ Սէյմուրի զօրաբաժինը գտնվում է Տեանցզինում 200 հիւանդներով եւ վիրաւորներով։ Պէկինում ապրող դեսպանները եւ օտաքահպատակները նրա հետ չեն եւ ոչինչ տեղեկութիւններ չը կան նրանց մասին։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Ուլիամ Ռէդմօնդ հարցնում է՝ թէ արդեօք ժամադրութիւն կայ զօրքերով մշտապէս գրաւել Եգիպտոսը եւ, եթէ չէ, ուրեմն երբ պէտք է վերջանայ այդ գրաւումը։ Բրոդրիկ պատասխանում է. «Կառավարութիւնը ոչինչ չունի աւելացնելու այն յայտարարութիւններին, որ թէ ինքն, թէ նախկին մինիստրութիւնները հրապարակօրէն տուել են անգլիական քաղաքականութեան հարցի մասին Եգիպտոսում։ Ռէդմօնդ ապա հարցնում է, թէ արդեօք խէդիվը նրա համար է գալիս Անգլիա, որ խնդրէ նրանից՝ հեռացնել իրան երկրից։ Բրոդրիկ պատասխան չէ տալիս։ Զէմբերլէն ասում է, որ Կումասիից ոչինչ տեղեկութիւններ չեն ստացված։ Դեսպանութիւնների դրութեան մասին Պէկինում Բրոդրիկ ասում է, որ կառավարութիւնը ամեն տեսակ տեղեկութիւններ է ստացել եւ ամենավերջինից երեւում է, որ դեսպանները գտնվում են Պէկինում։

17 յունիսի

ԼՕՆԴՕՆ։ Ծովային մինիստրութիւնը հրատարակեց Սէյմուրի հեռագիրը Զիֆուից, յունիսի 16-ից. «Զը կարողացայ մինչեւ Պէկին հասնել երկաթուղիով եւ զօրաբաժնի հետ միասին վերադարձայ Տեանցզին։ Մայիսի 31-ին «Մեծ բռունցքի» երկու յարձակումները առաջապահ գնդի վրա յետ մղվեցին «Մեծ բռունցքի» համար մեծ կորուստներով եւ առանց կորուստի մեզ համար։ Ցունիսի 1-ին «Մեծ բռունցքի» ոյժերը յարձակում գործեցին մեր գնացքի վրա եւ սկզբում կրկին յետ մղվեցին, կորցնելով մօտաւոր սպէս հարիւր մարդ սպանվածներ, իսկ մեր կողմից սպանվեցին միայն հինգ իտալացիներ։ Կէս օրից յետոյ «Մեծ բռունցքը» յարձակում գործեց անգլիական այն պահապանների վրա, որոնք մնացել էին Լօֆա կայարանը պաշտպանելու համար. այնտեղ ուղարկվեցին օգնական զօրքեր, եւ թշնամին յետ մղվեց մօտ 100 մարդու կորուստով. մեր կողմից վիրաւորվեցին երկու նաւատի։ Անտինգ հասնելուց յետոյ, մենք ՀԼասված գտանք երկաթուղին, եւ անհնար էր մեզ համար ճանապարհը շարունակել։ Մենք վճռեցինք վերադառնալ Եանցզուն, որպէս զի կազմակերպենք արշաւախումբը, որը գետով ընթանալով, կերթար Պէկին։ Երբ Լանգֆանից հեռացաւ «Մեծ բռունցքը»,—կայսերական զօրքերը յարձակում գործեցին այն երկու գնացքի վրա, որոնցով մենք պէտք է գնայինք զօրքերով։ Չինացիներից սպանվեցին 400 կամ 500 մարդիկ, մեզանից—սպանվեցին 6 եւ վիրաւորվեցին 48 հոգի. երկու գնացքներն եւս հասան ինձ Եանցզունում, ուր երկաթուղիական գիծը նոյնպէս կատարելապէս աւերված էր։ Որովհետեւ ուտեստի պաշար սակաւ էր, եւ վիրաւորվածները մեզ անհանգստացնում էին, մենք հարկադրված էինք վերադառնալ Տեանձին, որտեղից արդէն վեց օր է տեղեկութիւններ չունէինք։ Վիրաւորվածներին յունիսի 7-ին նաւակ նստեցրինք, եւ զօրաբաժինը գնաց գետի երկարութեամբ։ Մի գիւղից մեզանից ջարդ կրած ապստամբները գնացին հարեւան գիւղը, գրաւեցին լաւ ընտրված դիրքեր եւ այնտեղից սկսեցին մեր շարժումը արգելել։ Ստիպված էինք սուիններով եւ սպանիչ կրակով քշել նրանց այդ դիրքերից։ Ցունիսի 10-ին, գիշերը մենք ճանապարհ ընկանք եւ լուսաբացին հասանք կայսերական զինարանը, որ գտնվում է Տեանցզինից վերեւ, ուր չինացիները առաջ բարեկամաբար հանդիպեցին մեզ, ապա դաւաճանաբար մեզ դէմ կրակ բացին։ Մեզ աջողվեց գրաւել մի թնդանօթ. այդ ժամանակ գերմանացիներին աջողվեց լռեցնել երկու թնդանօթ եւ տիրել նրանց. ապա գրաւեցին զինարանը։ Չինացիները փորձեցին յետ վերցնել զինարանը։ Զինարանում մենք գտանք նոր տեսակի թնդանօթներ եւ զէնքեր։ Մենք ոչնչացրինք չինական մարտկոցները, որոնք գտնվում էին առջեւում։ Որովհետեւ մենք զինանոցում գտանք ռազմամթերք եւ բրինձ, ուստի կարող էինք պահվել մի քանի օր, բայց վիրաւորվածները ծանր բեռ էին մեզ համար եւ մենք Տեանցզինից խնդրեցինք օգնութիւն, որը հասաւ յունիսի 12-ին։ Միւս օրը մենք հասանք Տեանցզին, բայց դուրս գալուց առաջ հրդեհեցինք զինանոցը։ Անգլիացիների կորուստները—27 սպանված, 97 վիրաւորված, ամէրիկացիների—4 սպանված, 28 վիրաւորված, ֆրանսիացիների—1 սպանված, 10 վիրաւորված, գերմանացիների—12 սպանված, 62 վիրաւորված, իտալացիների—5 սպանված, 3 վիրաւորված, եապօնցիների—2 սպանված, 3 վիրաւորված, աւստրիացիների—1 սպանված, 1 վիրաւորված, ռուսների—10 սպանված, 27 վիրաւորված»։

ԼՕՆԴՕՆ։ Կանտոնից հաղորդում են, որ Լիխունչանգի ճանապարհվելը տեղի չունեցաւ, որովհետեւ բոլորովին անակնկալ կերպով հրաման ստացվեց կայսրից եւ կայսրուհուց։ Լիխունգչանգի հրամանով գլխատվեցան 130 «Մեծ բռունցքի» ծովահէններ, որպէս զի երկիւղ տարածվի ապստամբ տարրերի մէջ։

Բօբերտս հեռագրում է Պրետորիայից, որ, ինչպէս հաղորդում է Լինդլէից գեներալ Պեդժետ, նա յունիսի 13-ին պատերազմել է բօէրների դէմ, որոնք ուժեղ օգնութիւն էին ստացել։ Նոյն օրը յարձակման ենթարկվեց սայլախումբը, որ նշանակված էր Լինդլէի համար. 10 սպանվածներ եւ մօտ 54 վիրաւորվածներ եղան. միւս պատերազմում սպանվել են 3, վիրաւորվել են 23։ Ֆիկսբերգի մօտ տեղի ունեցած ընդհարման մէջ սպանվել են երկու օֆիցէր, վիրաւորվել են 4 զինուոր։ Մետուէն հալածեց թշնամուն եւ խլեց նրանից 8000 ոչխար եւ 500 տաւար։ Գեներալ Գենտէր շարունակում էր առանց դիմադրութեան գնալ դէպի Վաալ։ Բօէրները յարձակվեցան Սպրինգս կայարանի վրա, Իօհանեսբուրգի արեւելակողմում, բայց տեղային զօրքը յետ մղեց նրանց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Աժենահեղինակաւոր աղբիւրից մեզ հաղորդում են, որ ծայրագոյն Արեւելքից ստացվել են պաշտօնական հաղորդագրութիւններ, թէ մի քանի տեղերում չինական ազգաբնակութիւնը, չը հաւակրելով «Մեծ բռունցքների» շարժման, ինքնակամ մտաւ ռուսաց հովանաւորութեան տակ։ Ի միջի այլոց, այսպիսի տեղեկութիւն ստացվել է Նովո-Կէյդսէից։

ՇԱՆԳՀԱՅ։ Պաշտօնական աղբիւրից հաղորդում են, որ ռուս ծովապետ Ալէքսէեւ կընդունէ պետութիւնների դէպի հիւսիսային Չինաստան կատարելիք արշաւանքի հրամանատարութիւնը։

18 յունիսի

ԼՕՆԴՕՆ։ Գնդապետ Դօրվարդսի հեռագիրը զինուորական մինիստրին յունիսի 17-ից հաղորդում է, որ Տեանցզինից դէպի հիւսիս-արեւելք գտնվող զինանոցը յունիսի 14-ին գրաւեցին միացեալ զօրքերը յարձակումով։ Բրիտանական զօրքերից մասնակցում էին նաւային բրիգադան եւ չինական գունդը։ Չինական գունդը յետ մղեց «Մեծ բռունցքի» յարձակումը ձախ թեւի վրա, ծանր կորուստներ պատճառելով թշնամուն։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողովը ընդունեց նաւատորմը մեծացնելու նախագիծը, կարգադրելով նոր նաւեր կառուցանելը մինչեւ 1908 թուականը։

ՎԻԵՆՆԱ։ «Politische Correspondenz»-ի ասելով Եապօնիան հարց էր առաջարկել պետութիւններին, թէ ինչպէս պէտք է հասկանալ դրութիւնը Չինաստանում եւ ինչ անհրաժեշտութիւններ են ծագում այդ դրութիւնից. պետութիւնները միաբան կարծիք յայտնեցին թէ իրանք պատերազմական դրութեան մէջ չեն գտնվում Չինաստանի վերաբերմամբ, ուր ազգաբնակութեան միայն մի մասը ապստամբական դրութեան մէջ է։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողով։ Քննվում է նաւատորմը մեծացնելու նախագիծը։ Ժողովը ընդունում է առաջին յօդուածը վեց զրահակիր մեծ նաւեր եւ հինգ զրահակիր կրէյսերներ շինելու մասին, եւ ականակիր նաւակների ու ստորջրեայ նաւեր շինելու համար նշանակեց 118 միլիոն ֆրանկ։ Նախագծում միայն 68 միլիոն էր նշանակված ականակիր եւ ստորջրեայ նաւերի համար, բայց պատգամաւորների ժողովը ընդունեց 50 միլիոնի աւելացում, Պելտանի պահանջի հիման վրա եւ կառավարութեան համաձայնութեամբ։

19 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խիվայից եկաւ խանի ժառանգը Սէիդ-Ասֆէնդեար-Գան-Տիւրա։

Փոխ-ծովապետ Ալէքսէեւ հեռագրում է Պօրտ-Արտուրից յունիսի 14-ից զինուորական մինիստրին. «Տակուից գեներալ Ստէսսէլ հաղորդում է յունիսի 14-ից, թէ Տեանձինի զինարանը, որ ամուր ապաստան էր ներկայացնում խռովարարների համար, որոնք մեծ վնաս էին պատճառում եւրոպական քաղաքին՝ առնված է յարձակումով։ Մանրամասնութիւնները յետոյ։

ՕԴԵՍԱ։ Ցունիսի անձրեւները ահագին աղդեցութիւն ունեցան դաշտային ցանքսերի վրա Բեսարաբիայի եւ Խերսօնի նահանգներում, թէպէտ տեղ-տեղ նրանք ուշացան։ Նախատեսվում է անհաւասար հունձ, բայց ընդհանուր անբերրիութեան մասին էլ խօսք չէ կարող լինել։

ՎԻԵՆՆԱ։ Այստեղի տեղեակ շրջաններում ոչինչ չը գիտեն Պարիզից հաղորդված այն համաձայնութեան մասին, որ իբր թէ կայացրել են պետութիւնները՝ Չինաստանից վարձատրութեան ապահովութիւն պահանջելու վերաբերմամբ. նոյնպէս լաւ յայտնի չէ այն մասին, իբր թէ համաձայնութիւն է կայացել միջազգային գրաւող զօրքի թիւը 80,000 մարդու հասցնելու մասին։ Պետութիւնների համաձայնութիւնը վերաբերում է նախ եւ առաջ՝ հաւերաչխ գործունէութեան՝ պաշտպանելու համար վտանգի մէջ գտնվող իրանց հպատակներին։ Նոյնպէս հնարաւոր է այն լուրը, թէ պէտք է տեղի ունենայ երեք կայսրների տեսակցութիւն։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Արտաքին գործերի, զինուորական եւ ծովային մինիստրները խորհրդակցութեան մէջ որոշեցին, թէ Ամերիկայի դեսպանի համար Չինաստանում՝ նոր հրահանգներ հարկաւոր չեն։ Օգնական զօրքեր կուղարկվին՝ միմիայն նրա պահանջելովը։

ՎՕՐՕՆԵԺ։ Ցունիսի 18-ին մարդատար-ապրանքատար գնացքը, որ Խարկովից գնում էր Բալաշովի ճանապարհով՝ Լիսկի կայարանի մօտ գծից դուրս եկաւ, ճանապարհի՝ անձրեւներից փչանալու պատճառով։ Վնասվեց չոգեկառքը, մի քանի վագոն ջարդված են։ Առ այժմ յայտնի է, որ սպանված են 4, վիրաւորված են 10։ Ճանապարհը փակված է ջարդված բեկորներով։

ՆԻԻ-ԵՕՐԿ։ Գօրօկէնի նաւարանի վրա պատահած սաստիկ հրդեհի ժամանակ ա.բվեցին հիւսիսային-գերմանական Լլօյդի չորս նաւամատոյց. ծանր վնասված են Լլօյդի «Մայն» չոգենաւը, Համբուրգ-ամերիկական գծի «Պիէնցիա» չոգենաւը, թեթեւ վնասված են Լլօյդի «Զաալէ» եւ «Բրեմէն» չոգենաւները։ Համբուրգ-ամերիկական գծի նաւամատոյցը պայթեցրած է դինամիտով, կրակի արծարծվելու առաջն առնելու նպատակով։ Երբ հրդեհն սկսվեց՝ շատ ճանապարհորդներ եւ ուրիշ մարդիկ ջուրը նետվեցին, որոնցից ոմանք խեղդվեցին, միւսները այրվեցին։ Խօսում են հարիւրաւոր զոհերի մասին։ «Զաալէ» եւ «Բրեմէն» չոգենաւների վրա միայն ծառայողներն էին գտնվում։ Առաջինը հրդեհի տեղից հեռացրվեց «Կայսէր Վիլհելմ» չոգենաւը։ Կարգապահու-

թիւնը չոգենաւերի վրա օրինակելի էր նոյն իսկ ամենամեծ վտանգի ժամանակ։ Ազատարար ժակոյկները անդադար աշխատում էին։ Կրակը այնպէս չուտ տարածվեց, որ «Զասլէ», «Մայն» եւ «Բրէմէն» չոգենաւերը հեռացնել ազատելու մասին մտածել անգամ կարելի չէր։ Սպանվածների թիւը կարելի կը լինի որոշել միայն այն ժամանակ՝ երբ կը ստուգվի կենդանի մնացածների եւ հիւանդանոց փոխադրվածների թիւը եւ կը համեմատվի ճանապարհորդների լիակատար ցուցակի հետ։

ՐԷՑԽՇՏԱԴՏ։ Կայացաւ երցհերցոգ Ֆրանց-Ֆէրդինանդի ամուսնութիւնը կոմսուհի Խոտէկի հետ, որին այսօրվանից չնորհվեց իշխանուհի օհէնբէրգի տիտղոսը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

**Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ**

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վներական (սիֆիլիս) և միզաեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկովանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Կ. Ի. Գզէլիեվ—12½—1½ ժ. ականջի, կոկորդի և քթի հ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Վ. Դ. Ծէրեթելի—6—8 ժ. ներքին և երեխայոց հ
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Տ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

## ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ

«ՄԻՋՈՐԴ»
(Посредникъ)

**Դ. Ի. ԵԱԿԻՄՈՎԻՉԻ**

Պուշկինեան պասաժ, Թամամշեվի քարավանսարայի հանդէպ։

Հրաւիրում է պ.պ. տանտէրերին հաղորդել մանրամասն հասցէ ազատ բնակարանների (դրա համար վերցնվում է 20 կոպ.), որ շատ դիւրութիւն կը պատճառէ թէ տանտէրերին եւ թէ բնակարան վարձողներին։ Այդ նպատակով պատրաստված է մանրամասն ցուցակ։ Գրասենեակում կայ ազատ բնակարանների մեծ ցուցակ։ Ցանկացողները թող դիմեն գրասենեակ։
№ 1. 0—43

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ

**ԲԺ. ՎԱՀ. ԱՐԾՐՈՒՆԻՆ**

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

մասնագիտաբար

ԲԳԻ, ԿՈԿՈՐԴԻ, ՔԹԻ ԵՒ ԱԿԱՆՋԻ

հիւանդները ընդունվում են առաւ. ժամը 8—12.

Հասցէն՝ Нижній бульваръ, д. Фидлера. (рядомъ армянск. церкви.) 10—10

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Ց. ՍՕԼՕՎԵԱՆԻ

«ԿՈՏՐՎԱԾ ՍԻՐՏ», վէպ, գինը . . 40 կոպ։
«ՂՕՆԱՂԼՈՒՂՍ ՄՆԱՑ» վոդեվիլ, գ. 20 »

Դիմել՝ Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցին, կամ՝ Астрахань, учителю Акиму Соловьянцу. 8—8

## ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՄ

ՇՈՒՇՈՒՄ թեմական դպրոցի վերաքննութիւն ունեցող աշակերտներին։
1—2 Ալէքսանդր Բարութչեան

## ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Ընտանեկան երեկոյթներ երեքշաբթի օրերը։ 1—1

## ԵՐԿՈՒ ԿԱՀՈՒՈՐՎԱԾ ՍԵՆԵԱԿ

կուզվի հայ երիտասարդի մը համար պատուաւոր ընտանիքի մը մէջ, ցերեկվան կերակուրով։ Դիմել Յովհաննեան քարվանսարայ։ № 60։
1—3

**Մանգլիսում** մի օտարուհի, որ գիտէ հիմնաւոր կերպով ֆրանսերէն եւ գերմաներէն, ցանկանում է դասեր տալ։ Նախօրօք տեղեկանալ «Մշակի» խմբագրութեան մէջ։ 1—3

1—26 (Ե.)

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ իր Ատեանում 1900 թ. յունիսի 28-ին ցերեկվայ ժամի 12-ին նշանակված է աճուրդ կապալով տալու քաղաքային հողի մի կտոր, որ գտնվում է Թիֆլիսի 7 մասում, Հալաբարում եւ որի տարածութիւնն է 23 դեսեատին, բացառապէս գաջ հանելու համար։ Աճուրդին մասնակցել կամեցողները կարող են տեսնել պայմանները վարչութեան 4-րորդ բաժնում բոլոր ատենական օրերը առաւօտեան ժամի 8-ից մինչեւ 1-ը։
2—3

Գետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.։

## ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

**ԶՈՒԻ ԿԱԹԸ**

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բագում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։
82—100

## ՊԱՏԱՀՄԱՄԲ ԾԱԽՎՈՒՄ ԵՆ

Բաթումում, քաղաքի կենտրօնում, երկու հիմնաւոր շինած քարեայ, լաւ արդիւնք բերող տներ, որոնք շինված են մի տարի առաջ։ Մէկը գտնվում է երկու ամենալաւ փողոցների՝ Միխայլովսկի եւ Օկլօբժինսկիի անկիւնում, «Լօնդօն» հիւրանոցի կողքին։ Տունը եռայարկ է, ունի իր մէջ 21 սենեակ եւ այլ կարեւոր շինութիւններ ու 5 մաղազին. յարմար է հիւրանոցի, գրասենեակի եւ բնակարանի համար։ Միւս տունը գտնվում է Օկլօբժինսկայա փողոցում, Սարաեվի մերելի վաճառանոցի հանդէպ, եւ բաղկացած է 26 սենեակից, իրանց կարեւոր շինութիւններով եւ 8 նկուղներով։ Ծախվում է նոյնպէս հիմնաւոր շինած, քարեայ, չոր ամարանոց, բաղկացած 24 սենեակից, որոնք յարմարաւորապէս բաժանված են մի քանի բնակարանների, կարեւոր շինութիւններով եւ քարեայ մեծ սարայով։ Ամարանոցը գտնվում է Մախինջաուրի ամարանոցատեղում, ունի գեղեցիկ տեսարաններ եւ հեռու է Բաթումից ընդամենը ¼ ժամվայ ճանապարհ երկաթուղով, գետի մօտ։ Ծովի ափին, բարձրադիր տեղի վրա, որտեղ բուսնում են կիտրոնի, նարնջի եւ այլ տրոպիկական բոյսեր։ Այս երեք կալուածքներն եւս, որոնք տարեկան 8000 ռուբլի զուտ արդիւնք են բերում, ծախվում են, տիրոջ Բաթումից հեռանալու պատճառով, ինքնուն եւ երկու հազար ռուբլով գնողի համար չատ ձեռնտու պայմաններով։ Գնողը պէտք է վճարէ միայն արժէքի երրորդ մասը, իսկ երկու երրորդի վճարումը կարող է յետաձգվել երկար ժամանակով բանկերում ընդունված պայմաններով կամ բանկում գրաւ դնելու պայմանով։ Իւրաքանչիւր կալուածքը կարելի է ծախել եւ առանձին։ Մի եւ նոյն ժամանակ, որովհետեւ ամարանոցը մօտ է ծովին, հեշտութեամբ եւ էժան գնով կարելի է սարքել այնտեղ ծովային տաքացրած վաննաներ։ Պայմանների մանրամասնութիւններն իմանալու համար դիմել Բաթում, տների եւ կալուածքների տէր Եդ. Նիկ. Սկակովսկուն. Батумъ. Эд. Ник. Скоковскому. 3—5

## ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Վարչութիւնը պատիւ ունի յայտնել հետեւեալը։ Ա. Պողոսեան նուիրել է ընկերութեանս անձեռնմխելի 5000 ռուբլի գումար, որի տոկոսով (մօտ 500 ր) երկու տարին մի անգամ պէտք է տրվի մրցանակ հայոց նոր (17-երորդ դարից սկսած) գրականութեան եւ պատմութեան վերաբերեալ լաւագոյն աշխատութիւնների համար։ Մրցանակին մասնակցել ցանկացողները պէտք է ներկայացնեն իրանց աշխատութիւնները մինչեւ 1901 թուականի յունվարի 1-ը։ Աշխատութիւնները ներկայացվում են առանց հեղինակների անունների. այս անունները ներկայացվում են առանձին ծրարներով, որոնց վրա դրվում է նոյն նշանաբանը, ինչ որ աշխատութեան վրա։ Մրցանակի արժանացած ձեռագրի հրատարակութիւնը կատարվում է ընկերութեան հաշուով։ Մրցանակաբաշխութեան իրաւունքը պատկանում է ընկերութեան խմբագրական մասնաժողովին, որը իր կողմից ձեռագրի քննութիւնը կարող է յանձնել եւ կողմնակի ձեռնհաս անձանց։ Ծրարները եւ աշխատութիւնները ուղարկվելու են ընկերութեան գրասենեակի հասցէով եւ նրանց վրա պէտք է նշանակված լինի «Ա. Պողոսեանի մրցանակի համար»։

Ընկերութեան գրասենեակի հասցէն. Лорисъ-Меликовская ул. Тифлисское Общество Изданія Армянскихъ Книгъ. 1—3

## ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառվում են հետեւեալ գրքերը՝

Բէրնէտ Ֆ., Փոքրիկ լորդի պատմութիւնը, պատկերազարդ վէպիկ, Բագու, գինը 1 ր. 25-ի փոխանակ, 60 կ.։
Բուդուղեան Ա. բժ., Ինչ է անառակութիւնը, Պետերբուրգ, գ. 5 կ.։
» Վներական ախտեր, Թիֆլիս, գ. 5 կ.։
» Առողջապահական զրոյցներ, Պետերբուրգ, գ. 5 կ.։
Բրիլիանչիկեան, Հայկական մօնոգրամներ եւ ծաղկագրեր ձեռագործի համար, Պետր. գ. 50 կ.։
Կոպպէ Ֆ. Հանրիէտ, Թիֆլիս, գ, 35 կ.։
Ճաղարբէգեան Ց., Հարստութեան աւետարան, Շուշի, գ. 40 կ.։
Մանուէլեան Լ., Բանաստեղծութիւններ եւ պոէմաներ, Բագու, գ. 50 կ.։
Սկոտ Վ., Կղզիների լորդը, Թիֆլիս, գ. 1 ր.։
Տէր-Ասատուրեան Պ., Գեղարուեստական ալբոմ Հայազգի գործիչների 32 պատկեր, Թիֆլիս, գ. 3 ր.։

Դիմել՝ Въ Тифлисѣ, Центральной Книжной Торговлѣ. (2) 2—2

## ԻՆՉՈՒ ԱՄԵՆ ՄԱՐԴ ՊԻՏՔ Է ՆԱԽԱՊԱՏՐՈՒԹԻՒՆ ՏԱՅ



# „ՆԻՒ-ԵՕՐԿ“

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԵԼՈՒՆ

ՈՐՈՎՀԵՏԵՒ Նա ամենախոշոր և ամենահաստատուն ընկերութիւններից մէկն է աշխարհս մէջ։
ՈՐՈՎՀԵՏԵՒ Նրա ակտիւը 416,773,000 ր. աւելի է։
ՈՐՈՎՀԵՏԵՒ «Նիւ-Եօրկ»-ը զուտ փոխադարձ ընկերութիւն է և իր բոլոր դրամագլուխներն ու արդիւնքները կազմում են բացառապէս ապահովագրվողների սեփականութիւնը։
ՈՐՈՎՀԵՏԵՒ «Նիւ-Եօրկ» ունի 54 տարվայ պատուաւոր անցեալ—տարիներ, որոնց ընթացքում նրա ֆինանսական ոյժն ու աջողութիւնը աճել է հետզհետէ։
ՈՐՈՎՀԵՏԵՒ ապահովագրվողներն ամեն տարվայ արդիւնքներին մասնակցում են ապահովագրվելու առաջին իսկ տարվանից։
ՈՐՈՎՀԵՏԵՒ Նրա պոլիսներն ԱՆՎԻՃԵԼԻ են. եթէ միայն պրեմիան կը վճարվի ճշդօրէն, ընկերութիւնն առանց որ եւ է վէճի եւ յապաղման կը վճարի, մահվան դէպքում, ապահովագրված գումարը եւ, այսպիսով ապահովագրվողը կատարելապէս վստահ է, որ այրին ու երեխաները կամ ժառանգները կը ժառանգեն դրամագլուխ եւ ոչ թէ դատ։
ՈՐՈՎՀԵՏԵՒ Իր պոլիսը 3 տարուց յետոյ դառնում է բացարձակապէս ԱՆԲԱԿՏԵԼԻ։ Պրեմիայի վճարումը դադարելու դէպքում, այնուամենայնիւ ապահովագրված կը մնայ սկզբնական գումարը լրիւ, որոշ տարիների ընթացքում, առանց որ եւ է ծախսերի, կամ ապահովագրվողը կարող է ստանալ լրիւ վճարված պոլիսը պակաս գնով, սկզբնական պոլիսի պայմաններով, կամ, վերջապէս, նա կարող է առձեռն դրամով ստանալ պոլիսի յետ գնման արժէքը։
ՈՐՈՎՀԵՏԵՒ Եթէ պոլիսը իր ոյժը կը պահպանի ոչ պակաս քան 3 տարի ապահովագրվողը կարող է ընկերութիւնից ստանալ պոլիսի գրականով տարեկան 6%-ով տուած զուտ եկամտից իր հասանելիքը։
ՈՐՈՎՀԵՏԵՒ «Նիւ-Եօրկ» ընկերութիւնը տալիս է եւ այնպիսի պոլիսներ, որոնցով, բացի ապահովագրված դրամագլխի վճարումից, ապահովագրութեան համար ներկայացրած բոլոր պրեմիաները վերադարձնում են ժառանգներին այն դէպքում, երբ ապահովագրողը կը մեռնի պայմանագրի մէջ նախատեսված 10, 15 եւ 20 տարվայ շրջանի ընթացքում։
ՈՐՈՎՀԵՏԵՒ «Նիւ-Եօրկ» ընկերութիւնը, բացի ներկայացրած 500,000 ր. մշտական գրաւականից, Ռուսաստանում եղած ապահովագրութիւնների պրեմիաների լիակատար գումարները դնում է պետական բանկը։ Ներկայումս Ռուսաստանում «Նիւ-Եօրկ» ընկերութեան մէջ ապահովագրվածների խնայողութիւնների յատուկ ֆոնդը 9,053,000 ռուբլուց աւելի է։
ՈՐՈՎՀԵՏԵՒ «Նիւ-Եօրկ» ընկերութեան գործունէութիւնը Ռուսաստանում գտնվում է ռուսաց կառավարութեան մշտական վերահսկողութեան տակ, այնպէս որ նրա պոլիսներն ապահովված են ամեն տեսակ գրականներով։
ՈՐՈՎՀԵՏԵՒ շնորհիւ վերոյիշեալ բոլոր պայմանների, «Նիւ-Եօրկ» ընկերութեան պոլիսը հանդիսանում է ոչ շռայլութիւն, ոչ ծախք, նա ամենալաւ կարողութիւնն է, որ ամեն ոք կարող է թողնել իր ընտանիքին, որովհետեւ այդ կարողութիւնն իսկոյն առձեռն դրամի է փոխվում եւ ազատ է այն զանազան ժառանգներից, որոնք առաջանում են հողերը կամ անշարժ սեփականութիւնները ծախելիս, եւ չեն ենթարկվում բօրսային տատանումներին։
ՈՐՈՎՀԵՏԵՒ «Նիւ-Եօրկ» ընկերութիւնը միակ հաստատութիւնն է, որ տալիս է բոլոր վերոյիշեալ օգուտները։

Գլխաւոր վարչութիւնը Ռուսաստանի համար՝ С.-Петербургъ, Малая Морская, 12,

Գլխաւոր լիազօրը Ռուսաստանի համար **Գ. Գ. ՄԵԼԼԷՐ**

Բաժանմունքը ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Գօլօվինսկի պրօսպեկտ, Արաֆելեանի նոր տուն (կադետների կորպուսի հանդէպ)։ 11—12

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

**Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.**

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 21 յունիսի (4 յուլիսի) ԱՆԱՏՕԼԻ չոգենաւը, նաւապետ ԲԼԱՆԿԻ։ Եւ այսպէս չարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նարէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մուրաֆեաններին, Նարէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՕՍՍԻՑՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. Հ. Չ.) 17—20


Дозволено цензурою, Тифлисъ, 19 Іюня 1900 г.

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.